ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«07» «դեկտեմբերի» 2012 թ. N 1077-Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

«___» «____________» 20 թ. N
ք.Երևան

# Հ Ա Մ Ա Տ Ե Ղ Հ Ր Ա Մ Ա Ն
## 2013 ԹՎԱԿԱՆԻՆ ԸՍՏ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԹՎԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԲԱՆԱՁԵՎԻ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման, պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարվող վերաբաշխումների կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 25-ի N773 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1262-Ն որոշման 2-րդ կետը՝

հ ր ա մ ա յ ու մ ենք՝

1. Հաստատել 2013 թվականին ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի՝

Ըգ = Սթ x Սգ + Պգ, գործակիցները, հետևյալ չափերով.

Սգ՝ մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը՝ 111235 դրամ,

Պգ՝ հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումարը՝ 16876.0 հազ.դրամ:

2. Հաշվարկը կատարելիս՝ կիրառվում են գործակիցներ հանրակրթական դպրոցի տարրական, միջին և ավագ մակարդակների համար, մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը բազմապատկելով՝ տարրական մակարդակի համար՝ 0.7986 գործակցով, միջին մակարդակի համար՝ 1.1101 գործակցով, ավագ մակարդակի համար՝ 1.15 գործակցով: Միաժամանակ, կիրառվում են լրացուցիչ գործակիցներ բարձր լեռնային, լեռնային բնակավայրերի և միևնույն բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ ունեցող, ինչպես նաև ավագ դպրոցների համար, մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը բազմապատկելով բարձր լեռնային բնակավայրերի դպրոցների համար՝ 1.21 գործակցով, լեռնային բնակավայրերի դպրոցների համար՝ 1.03 գործակցով, միևնույն բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ 1.2 գործակցով, ավագ դպրոցների համար՝ 1.11 գործակցով :

3. Որպես հաստատության սովորողների թիվ՝ Սթ, ընդունվում է աշակերտների միջին տարեկան թվաքանակը, որը ենթակա է ճշտման ուսումնական տարվա սկզբին, հաշվի առնելով դասարանների փաստացի կոմպլեկտավորումը:

ՀՀ ֆինանսների նախարար
Վ. Գաբրիելյան

ՀՀ կրթության և գիտության նախարար
Ա.Աշոտյան